

## Մաղաքիա Օրմանյան – 175

Հայաստանի ազգային գրադարանը 2016թ. փետրվարի 26-ին ժամը 14:00 կազմակերպել էր ցուցադրություն-միջոցառում՝ նվիրված աստվածաբան, հայագետ, պատմաբան, բանասեր, հրապարակախոս, հասարակական գործիչ, Կ. Պոլսի պատրիարք (1896-1908) Մաղաքիա Օրմանյանի ծննդյան 175-ամյակին: Ներկայացվեց նրա գրական ժառանգությունը, ինչպես նաև նրա մասին տարբեր ժամանակա հատվածներում հրատարակված վերլուծությունները: Մատենագիտության և գիտական հետազոտությունների բաժինը հակիրճ ներկայացրեց բաժնում կազմվող «Մաղաքիա Օրմանյան» կենսամատենագիտությունը:

Ծրագրում՝

Բացման խոսք՝ Մատենագիտության և գիտական հետազոտությունների բաժնի վարիչ ՄայաԳրիգորյան

Բանախոսներ՝

ՀՊՄՀ քաղաքագիտության և իրավունքի պատմության ամբիոնի դասախոս ,  
ասիստենտ, Փիլիսոփայական գիտությունների թեկնածու Լիլիթ Սարվազյան  
ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի Նոր պատմության բաժնի գիտաշխատող,  
պատմական գիտությունների թեկնածու Մարինե Հարությունյան  
Մատենագիտության և գիտական հետազոտությունների բաժնի Հայ գրքի և  
սփյուռքահայ մամուլի ենթաբաժնի վարիչ Սուսաննա Գրիգորյան